

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 7

15 ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո.
Եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Գրանի կամ
5 բուլլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
քին չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
ջընդգործողութեան չեն առնուիր:

Տարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ն. ՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայ-
մաններով:

ՁԵՌՔԷ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غاطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galatâ, Constantinople

ԱՅՍ ԿԼԻՄԵՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վիշտիս կան որոնք այս աշխարհածանօթ գեղով կատարելապէս կը բժշկուին:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

19

SCOTT'S EMULSION

Հալ, հարուստ, և բոլոր որկորի և թոքի վիշտերին հպէս թոքացաւ, և պրօնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատճառող անհանգստութիւններն՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուն և վերջապէս կը բժշկուին: Կամ նաւանգ ծիրական օտտի նկատմամբ՝ առաջին նշանները տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Եթէ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք է զեղարան մը դիմել և

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԴՐՈՒԹԻՈՒՆ

մը առնել: Ըսգօթի Բաղադրութիւնը այս աղետը կը զազրեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Բոլոր բեղաբերները և բեղաձառները իր ծախսին:

ՏՈՒԹ. Ե. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ, կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով և խնամով, ստամոքի, աղեաց, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, գաղղիական ախտերը (սիֆիլիս և այլն) և մորթի հիւանդութիւնները: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:

ԲԵՐԱՅԻ ՄԱՍՍԱՆՆԱՄԱՐՆԵՐԻ հերկայիս կը փութայ ծանուցանել թէ արդուիկ ծանօթ վարպետ Յարութիւն էֆ. Գաթըրճեան արդուիկ և լուսայքի զարմարան մը բացած է Ե. Բերա, Թագսիմ փողոց, թիւ 19: Սոյն վարպետը իր խնամով աշխատութեամբ, լուծեամբ և չափաւոր գիներով իրեն զիմուցները գոհացնելու առաջադրութենէ վաղ, Աղքատախնամին շահաբաժին մը նուիրելու ինքնայորդոր և գովելի յանձնարարութիւնն ևս ունեցած է:

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ



Ընտիր

Հոտաւէտ

Խնայողական

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Ե. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը թէ՛ պատրաստ և թէ՛ օր ըստ օրէ հասնող թարմ և աղնուադոյն տեսակ թէյերով կ'ընայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ թէյի նոյն իսկ էն խտտապահանջ սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի դաւառներու հետ և յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր, ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարեալք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Ե. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

ԱԺԱՆ ԱԺԱՆ ԱԺԱՆ

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 7

15 ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անճաղակա յիշատակներ (Դր. Շահինեանի մահուան առթիւ) ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ :— Իտալ լեզուն. Դր. ՄԱԼԽԱՍ :— Կեանքի պատկերներ. «Ապուլ» . ԶԱՊԵԼ ՆՍԱՅՆԱՆ :— Ներքու բերումներ. «Սիրք» քարգմ. ՊԵՐՃՈՒՀԻ :— ձերմակ լեւակները . քարգմ. ԱԳԱՊԻ :— Օրում կեանքներ. Տ. Ա. — Տիկինի մը (Սիրերգ) Յ. Տեր-Յակոբեան :— Թափառումներ. ՄԻՀԻ :— Այծեմնիկի փունջը (Թերթոն) ԱՆՏՐԻ ԹԵՕՐԻԷ :

ԱՆՁՆԱԿԱՆ ՅԻԺԱՏԱԿՆԵՐ^(*)

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՄԱՀՈՒՄՆ ԱՌԹԻՒ

Շահինեան Դաւրեւիանքէն մեկնելուն, անմիջապէս վարժապետական առարկէն մտաւ իր ծննդավայրը : Եւ ուսուցչութեան մէջն էր, որ իր հողին աւանդեց : Հակառակ դաստիարակութեան համար իր ունեցած նախապիտոյութեան, այդ առարկէն մէջ՝ սակայն՝ ամենէն աւելի զգաց ու կրեց ապերախութեան հարուածները, որոնք շատ սառը համազամանքներով իրեն կը բաղխէին : 1897ի աշունը՝ իր հիւանդութեան անկողնին գամուած, անիկա արդէն կը չարչարուէր Հոգաբարձութեան ապօրէն վարմունքին իր մէջը ծնուցած բովանդակ նողկանքովը : Հոգիի այդ գեղումները զինքը երկու մտածումներու մէջ կը տարուբերէր. կը մտածէ պահ մը թողու իր ծննդավայրը եւ դայն իսպառ մունայ պանդխտութեան մը ծոցը, բայց այդ գաղափարն անգամ կը ստկայնէ զինքը : Էր կրնար իր այդ որոշումը գործադրելու քաջութիւնը զգալ իր մէջ, որովհետեւ նշանուած էր այն ատեն : Կը մտադրէ թողու թողորովն ուսուցչի առարկէն եւ երկաթուղի կայարանի պաշտօնեայ դառնալ :

«Բայց, կը գրէր ինձ 98ի մարտին, ուսուցչութեան համար զգացած սէրս անգամ

մըն ալ զօրանալով իմ մէջս, կրկին բարոյական յանդգնութեամբ դուրս նետուեցայ եւ ինքզինքս Եզինէ գտայ...» : Իր մէջ հոգիի անանկ պարկեշտ արիւթիւն մը, խիզախութիւն մը եւ զօրաւոր անկեղծութիւն մը կար որ չէին թողուր զինքը ընկրկիլ կամ քծնիլ : Այդ իր յատկութիւնները պատճառ եղան, որ ամենէն աւելի ինքը զգաց Հոգաբարձուներութեան անհրաժեշտութիւնը եւ զիւրի քահանաներու ազատ հաշիւներուն զօրաւոր հարուածները : «Ո՛չ ժամանակը, եւ ո՛չ միջավայրը կրցած են իմ յատկութիւններէս բան մը ջնջել մէջս. անցեալս արդէն գերազանցապէս կ'ընձեռէ ինձի այս մասին հարկ եղած ազատայայտները : Եթէ քիչ մը շողոքորթութիւն արխնիս մէջ խառնուելով նկարագրիս մաս կազմէր, այսօր Մանիտա դառնաւ կ'ըլլայի տակաւին, եւ կամ եթէ քիչ մը յողորմեղ, գեղեււոտ ըլլայի, մէկ տարին կը թողուի Դաւրեւիանքը, եւ ծննդավայրս կը դառնայի, երբ շուրջս կը յուզուէր նախանձոտ հակառակութիւն մը, եւ երբ այդ դժուարութիւններուն մէջ, տա-

(*) Շար. նախորդ թիւէն եւ վերջ :

կաւին կը յամառէի չխզել բարեկամութեանս կապերը ա՛յն անձին հետ, որուն դէմ մասնացողներ ո՛չ սակաւ էին... Աքահաբայի հովանիին, լուսնի շողերուն տակ 95ի յունիս 28ի ուխտս պիտի երկարի մինչև գերեզման» :

Հագիւ տարի մը կը մնայ Եղինէ, և ահա 98ի արձակուրդէն վերջ կը հրաժարի իր պաշտօնէն, և կ'անցնի Ագահիսար : Ուսուցչի այս աստանդականութիւնը իր մէջ հոգեկան խորունկ փոփոխութիւններ մը ծնցուցած է : Հանդարտ Շահինեանը սկսած է տակաւ բարկացոս, սրտնեղ դառնալ, շուրջի իրադարձութիւնները այդ հոգեկան փոփոխութիւններուն կը նպաստէին գժբախտաբար : Ահա Ագահիսարէն 98 նոյ. 25 զբաժնէ նամակին սուղերը, որոնք կը հայելիացնեն իր այդ վիճակը .

«Երեք տարուան մէջ չքաշած նեղութիւնս, չկրած բանբասանքս չմնաց, տարի մը Մանիսա՝ վարի թաղ, տարի մը վերի թաղ, տարի մը Եղինէ, տարի մը Ագահիսար : Կը զգամ թէ այսպէս օգտակար չպիտի կրնամ ըլլալ այն դուզնաքեայ կարողութիւնովս, զոր ուխտած եմ նուիրել իմ համայնքիս : Հոս՝ Հոգաբարձութիւն մը, հոն՝ Թաղական մը, անդին տէրտէր մը միշտ քարընդոսներ ևն ա՛յն ուղղութեան զոր բռնած եմ, ամենքն ալ անձնական կիրքերու կամ յաջողիոտ մախանքներու յագեցումներ կը փնտռեն վարժապետին վրայ : Պիտի չկրնամ երկար ապրիլ դպրոցական ասանկ միջնորդաներու մէջ, ու ընդվզող բնութիւնովս, որ չգիտեր կեղծել : Վարած դպրոցս ինծի յարմար չէ, դժուար է ինծի՝ միակ դասատու անօգնական, 35—49 տըղաքներու գլուխ, նեղ, խուսափուկ ժամերով դասաւանդութիւնների կատարել, մինչ անդիէն 4—5 տարեկան սղտիկի մը մէջ շըշընկոցը զիս կ'ընդհատէ գործիս մէջ : Հաւատակ նախկին բնութեանս ու կամքիս, չունենալով հանդարտ՝ անձայն դասաւանդութիւն մը, կը սկսիմ ցասկոտ ըլլալ և այս ցասկոտութիւնս հակառակ ըլլալով դաստիարակութեան վրայ իմ ունեցած պայծառ դադարադննդուն, այնքա՛ն կը նեղէ զիս բարոյ յայտէս... Երբ մանկասկարտէզի յատուկ չա-

րաճձիներ կը դառնուին սրահիս մէջ, ու անոնք տրուած պատուէրներուն անգլխակից, կամ մղուած իրենց մանկական բնազդէն, խնդալու ու խօսելու կը պարապին, եւ խղճահարութիւն կունենան զանոնք արգիլելու իրենց ծիծաղներէն ու խնդումներէն, քանի որ ամենէն աւելի անոնք, այդ պըղտիկները, անկաշկանդ աճելու իրաւունք ունին : Բայց հակառակ խղձիս՝ ստիպուած եմ լուսնեղ զանոնք, իմ գործս շարունակելու համար» :

Ինչպէս նոյնիսկ իր տողերը կը ցուցնեն, Շահինեան խորապէս ըմբռնած էր ուսուցչի պաշտօնը, իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ : Ասի Դպրեւանքի արդիւնքը չէր սոսկ : Շահինեան այն ուսուցիչներէն չէր, որոնք իրենց ուսուցչութեան սկիզբէն մինչև վերջ ո՛ր եւ է անձնական յառաջդիմութեան, զարգացումի չեն ձգտիր եւ կայուն վիճակ մը կը ստանան : Իր մէջ չեշտուած ամենէն մեծ յատկութիւնն էր, այն շարունակ սորվող, շարունակ կարգացող եւ կրթուող միտքը, որ զինքը հետզհետէ ապագայի կատարելութեան պիտի տանէր : Եւ այդ ճամբան բացուած էր իր արժանիքին առջեւ : Իր Մանիսայի վերջին տարիներու ուսուցչութեան միջոցին էր, որ Սանասարեան վարժարանի Խնամակալութիւնը իր հետ լուրջ բանակցութիւններ ունեցաւ, զինքը նշանակելու համար Հայ-Բանասիրութեան իրբեւապագայ ուսուցիչը Սանասարեան Վարժարանին : Եւ այդ պաշտօնին արժանաւոր տիպար մը կազմելու համար իրմով, Խնամակալութիւնը յանձն առած էր զինքը երկու երեք տարի մը զրկել Եւրոպա կամ այլուր, աւելի եւս մշակելու համար իր ճիւղը : Բայց դեռ վերջնական կարգադրութեան մը չհասած, Շահինեան յանկարծ կը մեկնէր իր սիրելիներէն անդարձ, ինք որ կանխաւ զգացած էր թէ չատ երկար չպիտի կրնար ապրիլ «այս դպրոցական միջավայրին մէջ» :

Իր դերին, իր կոչումին եւ իր կեանքին վրայ կազմած գաղափարները կամ նախազգացումները ո՛րչափ ճիշդ էին :

Վերջին տարիներուս, Շահինեան՝ իր սիրած ամուսինէն վերջ, սիրական առարկայ

մըն ալ ունեցած էր, իր զաւակը, Լեւոնը, զոր այնքան յափշտակութեամբ խնժի կը ներկայացնէր, երբ իրիկուն մը միտսին անցուցինք իր տունին մէջ: Եւ ամէն անգամ իր նամակներուն մէջ բառ մը, բացատրութիւն մը կը գտնէր իր Լեւոնին նուիրելու: Կարծես թէ ամբողջ իր պաշտումը, իր սէրը, իր կեանքը իր մանկատի Լեւոնին մէջ խնայած էին: Իր նամակներէն մէկովը կը գրէր, — «Լեւոնիկս սկսած է թոթովել, ինչ անուշ լեզու մը ունի»: Ա՛խ, սա տղաքներուն լեզուն չես գիտեր ինչո՞ւ ա՛յնքան հրմայք, ա՛յնքան խանդ ունին իրենց մէջ, մանաւանդ երիտասարդ հայրերու համար: Եւ այսօր, այրիկին՝ մը գրկին մէջ իր Լեւոնն ալ որը կը թողու, իր կանխահաս մահովը, որ դժբախտութիւնն եղաւ իր տունին և իր համայնքին:

* * *

Շահինեան իր ուսուցչի և հրապարակագրի զբաղումներուն մէջ, որոնք իր անունին արժանի համբաւ մը հիւսնցին իր շուրջը Քիշ ժամանակուան մէջ, ունեցաւ նաեւ ժամանակ, երկարաշունչ գործերով ալ զբաղելու: Ազնիւարի իր պաշտօնավարութեան միջոցին արդէն վերջնապէս աւարտած էր Եկեղեցական պատմութեան իր ծրագիրը և ասկէ տարի մը առաջ աւարտած էր զանի: Օր մըն ալ ինձ կ'տեսէր, թէ «բարերար» մը յանձն առած է իր ծախքով զայն տպագրել: Կ'երեւի իր մահը պատճառ եղաւ որ այդ գեղեցիկ ձեռնարկը ձեռագիր վիճակի մէջ մնայ ցարդ: Փախաքելի էր, որ այդ բարերարը, որ անձանօթ կը մնայ նաեւ ինձ, չէզի իր մտադրութիւնէն, և զայն յանձնել բարեհաճի մամուլին. դէ՛թ ատով իր յիշատակը հաստատուն գիծ մը ունեցած կ'ըլլայ մեր գրականութեան մէջ, և անով կը մխիթարուին գոնէ իր այրին ու որբը: Սոյն երկասիրութիւնէն զատ Շահինեան ձեռնարկած էր պատրաստելու Գրական լեզուի ուսուցման համար դասընթաց մը, բոլորովին նոր ուղղութեամբ, ինչպէս նաեւ Բնգհ. ազգաց պատմութեան դասընթաց մը: Շահինեան, իր ուսուցչի համեստ թոշակէն բաւական մեծ մաս մը յատկացուցած էր իր գրական ու բանասիրա-

կան ծրագիրներուն յարմար գիրքերու, որոնք իր սիրական զբաղումները կը կազմէին: Սոյն նիւթերուն վրայ իր սրբերեքարար գրած յօդուածները, այսօր իրեւ. ամենամեծ երախտաւորութիւնը կը մնան իր ընդունակութեան ու տաղանդին և մեղի ափսոսալ կուտան իր մէջ՝ ուսուցիչը, գրագէտը, բանաստեղծը և քննադատը:

Հանգի՛ստ իր հոգիին, և մխիթարութիւն իր այրիին ու ծնողքին:

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ՈՏԱՆԱԻՈՐԻ ՄՐՅՈՒՄ

Մասիսի յառաջիկայ թիւով ՈՏԱՆԱԻՈՐԻ ՄՐՅՈՒՄ մը պիտի բանանք, մանրամասնաբար ծանուցանելով անոր պայմանները, աւելորդ է ըսել թէ, դարձեալ ՊԱՐԳԵՆԱԻՈՐ:

Այս մրցումին նպատակն է, ինչպէս էր նորալէպի մրցումինը, քաջալերել նոր գրողները՝ իրենց առաջին քայլերուն մէջ: Այս քաջալերանքը՝ գրականութեան մէջ՝ անհրաժեշտ է մանաւանդ բանաստեղծական ճիւղը մշակելու հակում ունեցող դեռատի երիտասարդներուն ու աղջիկներուն համար որոնց մէջ նորածիլ տաղանդներ ու թաքուն արժանիքներ յաճախ կը վհատին ու կը խամբին՝ որովհետեւ անտես առնուած էին իրենց գրչի նախասիրները: Մասիսի ուղղութիւնը եղած է, երեք տարիէ ի վեր, չի կապուիլ «անունի հմայք»ին և հրատարակել՝ ծանօթ բանաստեղծներու քերթուածներուն հետ, պարբերաբար, ոտանաւորներ որոնք թէև անձանօթ ստորագրութիւն մը կը կրեն, բայց բան մը կը խօստանան: Մեր հաստատելիք ոտանաւորի մրցումը ոյժ մը պիտի սայ սյս խմբագրական սկզբունքին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Յաջորդ թիւով

«ՄԻ ՄՈՒՆԱՐ ԶԻՍ»,

ԲՐԻԶԱՆԹԵՍԼԻ

զոր ստացանք վերջին պահուն:

Ա Ի Ր Տ Ը



Քննուե ձեռքի մը հըպումեն սարսըռուն,
Սըրանին մեկ անկիւնը լուռ ու մըքին,
Իր յենակին վրայ անշարժ,՝ սարսմուն,
Կը քրքռայ վնիս բիւրեղն անօրին :

Մեղամաղձիկ ու փաղցրալուր ձայնն անոր,
Շաս իսուր ք ու շաս անուշ ապաքեն,
Կարծես հեծփ մ'է եքերային, հեշօրօր,
Որ կուգայ մեզ անհունին լուրք բարձունքեն :

Բայց միեւնոյն ձեռքը փափուկ, ո՛ն, յանկարծ,
Բիւրս հարուածով մը խօլական, կարեվեր,
Կը դադրեցնէ երգն անօրին փայլարծարծ .
Նրգն արծաթէ բիւրեղին այն լուսայեռ :

Այսպէս, յանախ, գիրգ ձայնի մը հոգեթով
Փայլապանքին ներքեւ արբօռ, օրօռուն,
Մեր սիրտերը կը քրքրուան գորովով
Սիրով, յոյսով ու պաշտումով առլցուն :

Բայց այդ գոյսիկ շրթունքներէն սիրական,
Կըծու խօսք մը կոտրելով մեր սիրն իսկոյն,
Կը մարէ հոն սիրոյ հրալին յաւիտեան,
Յուրս պարսպ մը քողով հեգնող ու անհուն :

Քաղցր ակնարկ մը, լոյս ժպիտ մը, խօսք մ'անուշ,
Ծնունդ կու տան սիրոյ մ'աննիւք, հըրեղեն
Անարգանք մը, կեղծիք մը, խօսք մ'անըզգոյշ
Կը քոցընեն սիրոյ քոչնիկն իր բոյնէն :

Հ Ե Ր Մ Ա Կ Լ Ե Լ Ա Կ Ն Ե Ր Ը

Լեւակներէն շա՛ս աւելի ըսպիսակ
Որոնց սրսփուն ողկոյզները, քիւին սակ,
Նորափրօք, հազիւ ծաղկած, մայիսին,
Պատուհանին եզերքն ի վար կ'իյնային,
Եւ որոնց բոյրն՝ հովէն մեղմիւ տարածուն
Պիտի օրէր անուրջներն իր ասմագուն,

Լեւակներէն աւելի սուրբ ու նուազ
Ձոր կը զոհենք մեր հանոյքին խօլ, աւա՛ղ,
Փեքրտելով ձիւնաքորմի լանջներին,
Երբ դեռ արփին՝ ցոլփերովն իր վառ, նրբին,
Գգուած չէ, հուր համբոյրով մը ոսկեյեռ,
Կոյս հոգիներն զոր սիրոյ բոյրն է խնկեր,

Իր մանկական բարձին վրայ կը նիւնէր,
Անհացած՝ վերջին բունով լուսայեռ՝
Հե՛ք ենթական հիւանդութեան մ'անողոք.
Լեւակներու սնդուսապաս նիւղ մը լո՛կ
Ծիրած, քնոյց մասներուն մէջ նեպ ներմակ,
Խաչին մօտը դրէր էին՝ վայրահակ:

Երբոր փըշեց շունչն իր յետին մեղմօրէն
Դեռ չը հնչած, հեռուէն, շա՛ս հեռուէն,
Հին մատուռին զանգակները մահերգակ.
Ձանգակիկներն լեւակներուն ըսպիսակ
Դողդղացին դաշնակութեամբ՝ յամբ, լուռ
Երբեքն մէջ հնչելով մեղմ, հեշտալուր:

Անկէ ի վեր երբ գարունին հետ աղուոր,
Կը բոլբոջեմ պարտեղին մէջ, ամեն օր,
Գիրգ ծաղիկներ, կարմիր, դեղին, կապուտակ,
Ձանգակիկներն լեւակներուն ըսպիսակ,
Կը հնչեն իր հոգւոյն համար ջինջ, անհուն,
Մահերգը լուռ, անհացած կոյսերուն:

Ի ՏԷԱԼ ԼԵԶՈՒՆ

Բաւական ատենէ ի վեր մտքին մէջ կ'ոտոճայի կարգ մը ենթադրութիւններ՝ մեր աշխարհիկ հայերէնին ապագայ վերջնական ձեւին վրայ: Անտարակոյս՝ մեր արդի լեզուն աւելի ենթակայ է շրջափոխման, քան իրենց կատարման հասած ուրիշ աղգերու բարբառները:

Արդէն՝ երբ առիթ ունեցայ, քանի մը տարի առաջ, դրագելու Հ. Ա. Ղազարեանի ոտանաւոր թարգմանութիւններով՝ Յրանսուա Գօթէի ժողովրդական բանաստեղծութիւններէն, փափաք յայտնեցի, եղբակացութեանցս մէջ, որ օր մը մեր ժողովուրդը խօսէր այնպէս՝ ինչպէս որ մատենագիրը պիտի գրէր, եւ աս վերջինն ալ գրէր՝ ինչպէս որ ժողովուրդը պիտի խօսէր:

Ապագային վրայ ունեցած գաղափարականս էր, այն ատեն, որ հայերէն լեզուն ձուլուէր մէկ բարբառի մէջ՝ որ ըլլար «գրական եւ աշխարհիկ» միանգամայն:

Երեք տարի յետոյ ձեռնարկեցի Բօր անգլիացի բանաստեղծին Փարձին թարգմանութեանը՝ որուն առթիւ պակաս չեղան, ինչպէս ծանօթ է ամէնուն, յախուռն եւ անարուեստ քննադատութիւններ: Գլխուս տեղաց անկապ եւ անիմաստ չաղփաղփութիւններու փոթորիկ մը՝ ուրկէ գլխաւորաբար ծնածն էր՝ du vent, գաղղիացիին ըսածին պէս:

Անտարբեր չմնացի սակայն Պ. Նշան Թոգաթլեան անուն գաղղիական պատանիի մը սա դիտողութեանը՝ որուն համեմատ իմ գըրած լեզուս է եղեր:

—Ո՛չ գրաբար, եւ ո՛չ ալ աշխարհաբար... Եւ—հոս է մեծ գոթաղբութիւնս—պատիւ չրեքեր եղեր ինծի...

Երբ գրական արուեստին հարցերէն գաւ, պատուայ ինդիքներն ալ կը սփսին միճուիլ գաղղիի ստոյններուն վրայ, ա՛լ կրնաք հասկընալ մնացածը...

Ես, հակառակը, չաւ պատուաւոր կը գտնեմ ան դիտողութիւնը՝ որ ներշնչուած է

գովեստէ զատ ամէն բանէ, եթէ երբեք քայլ մը մօտեցած եմ գաղափարականիս, անգիտակցաբար, նման Պ. Ժուրաշնին՝ որ կ'ըսէր իր փիլիսոփայութեան վարպետին.

—Ի՜նչ, երբ ըսեմ. «Նիքօ՛ւ, հողաթափերս բե՛ր, եւ գիշերնոց գդակս սո՛ւր», ի՜նչ, աս խօսածս արձա՞կ կ'ըլլայ:

Զա՛րմանալի բան: Երբ ես կը թարգմանեմ Բօրէն.

—«Արեւմուտքի քաղցրահիւք հովը զովաբեր,

«Կը շրեցօք ան ծառերուն մէջ տարուբեր...

կամ եթէ բերեղեայ վտակներ՝

—«Սողալով մեղմ, լըսելեաց հեօս կրմմընցեմ,

«Կաւրգացողներն ալ տաղկացած տուս կըմնցեմ,

աս ամէնը, ի՜նչ, ո՛չ գրաբար է եղեր, եւ

ո՛չ աշխարհաբար...

Ուրեմն, աւելի լա՛ւ, եթէ այդպէս է ստուգիլ, եւ ես հնարած պիտի ըլլամ, առանց գլխանալու, կարողը կորելու թելը...

Գոթաղբաբար, վկայականն է որ դործս կ'աւրէ, գաղղիականի մը սուած վկայականը՝ որ չգիտեմ ինչ կ'արժէ. աղա թէ ո՛չ՝ չաւ պատուաբեր պիտի ըլլար հեղինակաւոր տեղէ մը եկած նմանօրինակ վկայութիւն մը՝ որ յայտարարէր թէ.

—Ո՛չ գրաբար, եւ ո՛չ ալ աշխարհաբար կը գրեմ,

Ան ատեն՝ ես ալ իմ կողմէս պիտի աւելցնէի.

—Եւ ո՛չ իսկ գրաբարախօսուն աշխարհաբար...

Աս փոքր միջադէպը, որուն կ'ակնարկեմ, նոր եւ յստակ լոյս մը պիտի սփռէ գրաբարի եւ աշխարհաբարի հին վէճին վրայ որ չաւ հեղանութիւնէ բոլորովին զուրկ է այսօր: Մարդ կրնայ երգչու թէ յաւիտենականութեան անհունութեանը մէջ՝ պիտի չհանի օր մը ուր Հայ մը գրէ եւ խօսի միանգամայն աս հին քերականութեամբ.

—Ի գնալն քեզ գնեօս սրբոյն... կամ, ի կալ նմա յաղօթս... կամ, բանքս գեմարթօօծելոյն ե...

Այլ պիտի չգրէ, եւ ո՛չ իսկ պիտի չխօսի միանգամայն գաւարաբարբառով, ան կոր

ճայով՝ որուն քաղաքացիի պատիւ կը տրուի .

— Ախպետս'ն գիմալ կուսիք քաժա հաց... :

Մեր լեզուական աս երկայն չլթային վերի ծայրը կապուած է Հ. Արսէն Բագրատունիին, և միւս ծայրն ալ, օրինակի համար, մեր այսօրուան գաւառականներէն մէկուն, դէ՛ք որուն անունը որ կ'ուզէք :

Ինծի համար, ասոնց երկուքն ալ ծայրայեղութիւններ են : Սենեակի մատենագիրները մշակեցին լեզու մը որ չխօսուեցաւ և պիտի չխօսուի : Մեր գաւառականներն ալ կ'առաջարկեն լեզու մը՝ որ չգրուեցաւ և պիտի չգրուի : Ուրեմն, սա երկու հակոսմանց զիրքերուն մէջ տատանեցաւ և կը տատանի մեր Պոլսեկան աշխարհիկ լեզուն՝ որ կը սընանի և կ'աճի ան ամէն հիւթեղ տարրերով՝ զորս կրնայ իրեն նմանցնել առանց մեծ ճիգի :

Եթէ իմ գրածս հայերէն է և կ'ընդունուի ու կը հասկըցուի իբր այդպէս, ես, ուրեմն, իմ հայերէնովս այնքան շատ կը տարբերիմ Բագրատունիէն՝ որքան շատ կը տարբերին, իրենց գրաբարախառն աշխարհաբարովը, Պէշպէրեան և Գուրգէն մեր բուն գաւառական կոչուած վիպագիրներուն լեզուէն և կամ կարգ մը նորաձե հրապարակագիրներէն՝ որոնց cheval de batailleն է «գրաբարի ուրացումը» :

Հակառակը՝ ուրիշ միջավայրերու մէջ ալ դեռ շատ կան «գրաբարապաշտ»ներ՝ որոնք ի սուղ անմիջիկապ մնան ընդ չու... վեհ բարբառին : Ասոնց օթեւանը այլ եւս չհնչեր յաւերժահարսերուն խօսակցութիւններէն :

Կը տեսնէք ուրեմն թէ մեր լեզուին ներկայ պիտի շատ ճոխ է զանազան երանգներով՝ որոնց էն թանձրն է Բագրատունիական գրեւակերպը, յետոյ կու գայ Հիւրմիւզի Տեխմաֆովը, յետոյ կրկին Կսակարաւաներուն պարզ գրաբարը : Նուազ թանձր է Նուրայր Բիւղանդացիի դասական աշխարհաբարը, աւելի թեթեւ է Պերպերեանի կամ Թէրզեանի ու Պէշիկթաշեանի գրաբարախառն աշխարհաբարը : Տակաւ մտնելով աշխարհաբարի աւելի բաց երանգներուն մէջ՝ կը գտնենք Պոլսեկան հրապարակագրութեան կարելի եւ ղածին չափ խնամուած ժողովրդային լեզուն՝

զոր լաւ գրողները մատի վրայ կը համրուին, կարգ մը օրագիրներու այլատեքած ոճը, տեսակ մը գրողներու հակումը ուսմիլը փայփայելու՝ նորաձե ու անասնելի բացատրութիւններու իրենց ճոխ հաւաքոյթովը : Քայլ մը դեռ, և ահա՛ կ'իջնանք Պ. Մեսրոպ Նուսպարեանի հապէս Իզմիրցիի աշխարհաբարին մէջ՝ որ մեր առջեւ կը բանայ գաւառային արտագրութեանց երկնեանց ցուցադրութիւնը, չըսելու համար կործայ լեզուն :

Աս պարագաներուն մէջ՝ դժուար է գուշակել թէ ի՞նչ պիտի ըլլայ փափաքուած միաձեւ լեզուին վերջնական տիպը : Ուրանալ գրաբարը՝ այնքան մեծ մեղք է, ըստ իս, որքան աններելի յանցանք է արհամարհել գաւառական բարբառը : Երկուքն ալ շահագործուելիք ճոխ հանքեր կը պարունակեն : Առաջինը՝ կազմակերպուած լեզուի մը ամէն առաւելութիւններովը օժտուած է, հակառակ իր արտաուայ և անդրջնեղեղեան քերականութեանը : Երկրորդը՝ պիտի ազատագրէ զմեզ սենեակի գրագէտներուն բռնադժօսիկ գրեւակերպէն, որ տաղտկացուցիչ է իր միօրինակ վայելչութեամբը ու անկենդանութեամբը, լեզու մը՝ պուլաւսայե ելածի չափ մաքուր, զոր մարդ չգործածեր, զայն ազատուելու վախով : Այսու հանդերձ, ի՞նչ հարուստ բառարան մը ունի, ի՞նչ աննրման ատակութիւն մը՝ հարկաւոր նոր բառերու կազմութեանը մէջ ծառայելու իբր արմատ, իբր պատուաստ : Եւ դեռ ի՞նչ քիչ շահագործուած լեզու, ի՞նչ քիչ տարածուած, ի՞նչ հեռու մնացած սովորական մարդոց հասողութենէն : Որո՞ւնն է յանցանքը : Անո՞նց՝ որ չեն կրցած զայն լաւ սովորիլ, թէ անոնց որ չեն կրցած գործնական, հաճելի, զուարճալի ընել անոր ուսուցման եղանակը :

Գաւառական բարբառը պիտի չուշանայ աւելցնելու իր հարստութիւնները՝ գրաբար բառգիրքին հարստութեանը վրայ, որով մեր լեզուն—այսինքն ժողովրդին խօսածը և գրածը—պիտի թիթեւցնէ գրաբարին ամրապինդ կապերը, պիտի բնձնուէ մեղի նոր ոճ, նոր ասացուածք, խօսուած և կենդանի լեզուէ մը առնուած, պիտի նպաստէ լեզուական նոր գրամագլուխի մը կազմութեանը,

պիտի աւելցնէ իր նոր բաժինը գրարարի հին բաժինին վրայ, և շահակից պիտի ըլլայ ընդհանուր գործաւնութեանց արդիւնքին:

Գաւառական լեզուին մէջ խառնուած կան՝ անշուշտ՝ բազմաթիւ անօգուտ տարրեր, յաճախ օտար և երբեմն անկերպարան, որոնք պիտի ստըկուին, զատուին, մաքրուին, ինչպէս ձուլածոն կը դուռի հալոցին մէջ: Երկայն և առժանեղի աշխատութիւն մը պիտի ըլլայ աս, ուրկէ պիտի հաղիւ օգուտին մեր թոռները: Այսինքն, պիտի կատարուի նոյն զտման աշխատութիւնը՝ որ մասամբ անգլի ունեցաւ գրարարին վրայ:

Ասկէ պիտի ծնի նաև ընտանեկան լեզու մը, իր պէսպիսութեամբ որ գրեթէ բոլորովին կը պակսի այսօր մեզի: Հարկ է որ գրաբարը ժողովրդականանայ, և գաւառաբարբառը ազնուականանայ, որպէս զի աս կերպարանաւորութիւններէն առաջ դայ միջին լեզու մը աշխքան պերճ, ազնիւ և ընտիր, որքան դիւրին, յստակ, ալրադան, ձկուն և ընտանի:

Եթէ կը փախաքինք ունենալ օր մը մեզի յատուկ մատենադրութիւն մը՝ որ ելած ըլլայ բուն ժողովրդին արդանդէն, բուրէ մեր իսկ բարքերուն հոտը, պատկերացնէ մեր կեանքը՝ ինչպէս որ է, յար և նման, այսպիսի գաղափարականի մը իրադործմանը համար միակ յարմար լեզուական գործիքը պիտի ըլլայ այն՝ զոր ժողովուրդը պիտի դարբնէ, անով պիտի խօսի և պիտի գրէ միանգամայն, անխափր:

Իսկ որք ասեմն թէ... գրարարը կ'ապրի, թէ մեռած է, թէ պիտի վերածնի, կամ թէ յոյժից եղաւ. մեր արդի աշխարհարարը, կամ թէ յայլմէ էութենէ է գաւառական բարբառը, կամ թէ դրարարին հոգիէն պիտի չներշնչուին մեր ազգայն մատենադրները, զայնպիսին...:

Այո՛, այնպիսիները... պիտի նշտվուին մեր սուրբ և առաքեւական դպրութեան նախա-հայրերէն:

Գ. ՄԱՆԿԱՍ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա ՊՈՒՇԸ

Երբեմն, երբ յոգնած ու սրտաբեկ՝ հին բաներու կը խորհիմ, երբ եղբււանիւ ձերմակ ծաղիկներու բուրմունքը հոգիս կը լեցնէ երազանքներով և կամ բեկիւրեկ երգ մը կ'արձագանդուի իմ մէջս, ես կը յիշեմ դիւրօրէն պզտիկ տղեկ մը, տկար ու ձգձիմ տղեկ մը զոր ապուշը կը կոչէին ամենքը.

Իր բուն անունը, չեմ յիշեր բնաւ. բայց ինքը որոշապէս դեռ կը ներկայանայ մտքիս: Անիկա չափազանց տղեղ էր. երեւակայեցէք վախ մարմին մը, վատուժ սրունքներ, թոյլ թեւեր որ մինչև ծունդերուն կը հասնին և որոնց վրայ իսրուհիալի խոշոր գլուխ մը իրանին կապուած՝ նիհար վիզով որ յաճախ կը ձկէր իր կրած ծանրութենէն: Լայն և բարձր ճակտին վրայ ակնակապիւնները, իրարմէ հեռու, փոսային էին և յօնքերուն անդ անօր մազեր կը ցրուէին աչքերուն վերեւ՝ կարծես մորթը չափազանց պրկուելով ճակատին վրայ՝ անոնց բնական չարքը տարողնած ըլլար:

Աղքատ, տղեղ ու հիւանդագին, ո՞վ գիտէ ի՞նչ ճակատագրական ժառանգականութիւն մը վատթարացուցած էր իր տկար արիւնը, ո՞վ գիտէ ինչ ցեղային անսո՞ւ տարիներու ընթացքին մէջէն հասած էր իր տխրած գոյութեան:

Բնականաբար զսլոցին մէջ ափսէսն արհամարհուած և ծաղրուած էր խեղճ տղեկը. վարժապետը՝ կ'որ զլիտով, անդոյն աչքերով անմիտ մը՝ զլիտաւորն էր զայն չարչարողներուն. իսկ իր տարեկից տղաքը՝ չար և վատ՝ ամէն բոլէ կ'առջնորէին իր լքուած աղու խեղճ սիրտը: Կը յիշեմ զինքը, վարժապետին առաջքը չօքած՝ խոշոր աչքերը դիւրեւուն վրայ, տղաքը կը չրջապատէին զինքը հեգնոտ հետաքրքրութեամբ մը: Անիկա բոլորովին կը չուարէր, իր կապտորակ

և դուրդողուն մատը կը թափառէր գիրերուն վրայ, նիհար թուշը կարծես ա'լ աւելի կը քաշուէր անօգուտ ջանքերէն և երբեմն գլուխը կը բարձրացնէր տաժանելի չարժուամով մը չուրջը նայելու համար. այն ատեն կը տեսնէինք թէ աչքերը լեցուն էին արցունքով.

— Ապուշը կուլայ կոր... կը լսուէր ամէն կողմէ:

Բայց արդէն ապուշին հոգին սլացեր, շատ վեր սլացեր էր իր դձուճ և անսիրտ ընկերներէն. անոր բացուած աչքերը կարծես պարսպ միջոցին մէջ կը հետեւէին այնպիսի երեւոյթներու որոնք մեղի համար անտեսանելի էին և իր ընկերներուն ողորմելի ու տափակ միտքը երբեք չպիտի կրնար ընդհնամարել:

Անիկա գրեթէ միշտ պատժուած էր, և զբօսանքի ատեն երբ բոլոր աղաքը կշտացած իրենց մարտողութիւնը գիւրացնելու կը ջանային, ապուշը կը կենար սեղանատան դրան քով՝ անօթութենէն չըթուներ չոր և աչքերը մոլորուն՝ կերակուրներու հոտով բեռնաւորուած մթնոլորտին մէջ, մինչև որ սրբունքները մերժէին զինքը կրել և մէկ քովին խնար փրատակի մը պէս:

Քանի՜ անդամներ, սիրտս գլթութեամբ լեցուն, փափաք զգացած եմ, քովը երթալ և զինքը մխրթարել, սրով հետեւ իմ աղու մտքին մէջ տարտամօրէն կը զգայի իր հոգեկան ոխութիւնը վիճակը: Օ՛հ այո՛, շատ աղէկ կը նախազգայի որ այդ աղեղ, տգոյն արաւածը իր հոգեւոյն խորը տառապանքի և արցունքի անհուն պաշար մը ունէր և ո՛վ գիտէ ինչ անմխրթարելի դառնութեամբ կը խորհէր մեղի. — քանի՜ անդամներ իր կմախային երեւոյթը սեղանատան դրան առջև վրդոված է զիս և յուզումէն զգացած եմ պատառնելուն բերնիս մէջ խոշորնալը:

Յետոյ երբ զինքը տուն կը դրկէին ճաշելու, անիկա կը վազէր սրահի որ կրնար և կարծես դու կը տեսնեմ զինքը՝ թեւերը քովն ի վար կախուած և սրունքները այնչափ կոր՝ որ իրենց ճգնաժամին մէջ կ'երեւային. գլուխը կը տատանէր երկու քովերուն վրայ դանդաղ ու միօրինակ շարժումով մը, այնպէս որ երբ իր ամբողջ վտիտ էութիւնը

կը կորսուէր հեռաւորութեան մէջ՝ գլուխը միայն կ'երեւար որ կը տատանէր, միշտ կը տատանէր:

Երբեք օր մը դանդաղ մշ չեր ունեցած. արդէն մտքովը միշտ բացակայ կը թուէր, այնքա՛ն աչքերը չէին նայեր և այնքա՛ն անտարբեր կը մնար աղոյ չարութեան. այնպէս որ համոզուած էինք թէ բացարձակ անզգայ մըն է: Անգամ մը սակայն զինքը տեսայ որ կռնակը արեւին՝ տարածուած էր խոտերուն վրայ և աչքերը կը քթթէր հեշտութեամբ, եղբււանի ծաղիկներու ճերմակ փունջ մը ունէր՝ զոր ռնքունքին վրայ սեղմած կը համբուրէր, կը համբուրէր:

Երբեմն ալ տարօրինակ հէքեաթներ կը պատմէր զորս մամիկէն ստուեր էր, բէրինեւրու կախարդական զրոյցներ, մոգական ճամբաներու մէջէն գնացքներ ու լուսիններ ուրնց շողերը կ'արբեցնէին, հմայուած գետեր որ իրենց մէջ կը թաւալէին ամբողջ բնութեան գաղանիքները: Երբ կը լսէր և կը տեսնէր զինքը զմայլանքէն գլուխը ուժգին տատանելով մէկ ուսէն միւսին վրայ, գլխու պտոյտ կը զգայի և տակնուվրայ եղած ուղեղիս մէջ կը պարէին ծիածանով կերտուած օղային հագուստներ, չնայաւորիկ ծաղիկներ որոնք իրենց բուրումնաւէտ երգերով կ'արբեցնէին խօսկան հուրիները և թռչուններ, խոշորագուտր թռչուններ, որոնք ներդաշնակ լոյսերով կ'ողողէին մթնոլորտը:

Անգամ մը երբ հաղիւ հիաթափ իր գլուխով հեքեաթներէն՝ գլնովի պէս կը թուէր ինծի թէ ամէն բան շուրջս կը դառնար, յանկարծ լսեցինք հարուստ աղայ մը որ սլտուղէ գրկուած ըլլալուն համար երեսը պատին, կատաղութենէն կ'ոռնար. բոպէ մը վարանելէ ետքը՝ ապուշը մօտիկցաւ անոր և իր միամիտ ու պարզ հոգիովը կարծելով զայն միտիթարել, ափ մը չոր պտուղ հրամցուց յանցաւորին. մէկէն բուռնցքի հարուած մը զինքը զգետնեց. երբ ոտքի ելաւ, լորցունքը կը կախուէր թուշէն վար, գլուխը վեր առաւ տաժանքով և մեղի նայեցաւ խորունկ և յուսահատ նայուածքով մը:

Օ՛հ, երբեք չպիտի մոռնամ այդ տրամադէին նայուածքը, իր չհասկցուած պզտիկ հո-

գիւնն տառապանքը կար հոն և քիչ մըն ալ հպարտութիւնը: Խնդճ պղտիկ աղեկ, ի՛նչ պէս պիտի ուզէի հիմա քու ցաւագին զլուխդ կուրծքիս վրայ սեղմել և անհուն գորովով շոյել քու կարծր և ցանցաւ մազերդ որոնք կարծես ա՛լ աւելի ցցուն մնացած էին, այլի ամէն գուրգուրանքէ:

Այս, ինչպէս պիտի ուզէի դոնէ ժամուան մը համար մխիթարել քու անհունապէս տըխուր հոգիդ, հեծկլաւութեանով բեռնաւորուած հոգիդ... բայց այն առնն ես չկրցայ հասկնալ ու խորհած քու երեւոյթէդ, մանաւանդ նայուածքէդ խռովուած, քովէդ հեռացաւ անմիջապէս:

Օր մը լսեցինք որ ապուշը գլխու հիւանդութեան մը հետեւանքով մեռեր էր: Ընկերութիւնս մէկը ըսաւ անգիտակցաբար.

— Հարկաւ պիտի մեռնէր, շատ ծանր էր գլուխը իրեն համար:

Անտարակոյտ շատ ծանր էր գլուխը. այդ պիտի բեռով մը չէ որ մարդ գլխաւ կրնամ անցնիլ տափակ մարդոց ընկերութեան մէջէն:

ՉԱՊԷՆ, ԵՍՍՏՅԱՆ

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Մի՛ դարմանաք, եթէ ձեզի ըսեմ որ, Ֆրանսական Ակադեմիի անմահները ուղղադրութիւն ըսուած բանը չեն գիտեր:

— Ակադեմիի անմահներն ալ, պիտի կըրկնէք, ուղղագրութիւն չեն գիտեր: Իմացեր էինք որ, օրինակի համար, Ֆլորէրի տաւրիններով սրբագրուած, կոկուած գործին մէջ մէկ քանի ուղղադրական սխալներ կան: Ռամպիւթօ citronը sitron գրեց, տո՛ւ: Օտիֆրէ—Բաւքիէ գուքը, այն նամակին մէջ որով ինքզինքը Ակադեմիին թեկնածու կը ներկայացնէր, académieն երկու Եով գրեց, accadémie: Ասոնք գիտէինք, բայց չէինք կարծեր որ Ակադեմիի անդամներն ալ ուղղագրութիւն չեն գիտեր:

Եւ սակայն, մոիկ ըրէք:

1868ին, Էօփէնի կայսրուհին խնդրանքին վրայ, որուն հաւտալը չէր դար որ

ինչպէս ակադեմական մը սխալ կը գրէ, Գօմբիէնյեի շքեղ գլեակին մէջ գտնուող անմահներուն ուղղադրական քննութիւն մը բացաւ Բրուէլը Մէրիմէ: Կը հաւատամք, ակադեմականներէն ո՛չ մէկը երեսի ջուրով աղատեցաւ, ո՛չ մէկը կըցաւ տարրական վրկայական մը առնել: Ընդհակառակը:

Այս առթիւ, մանրալէպ մը.

Առտու մը, — կամ իրիկուն մը, ո՛րը որ կ'ուզէք, ասիկա ինչդիւր չէ, — Կատոն Պուասիէ ժպտուն գէմքով մը, Գօլէթ տը Ֆրանսի ու Ակադեմիի իր ընկերոջ՝ Ռընանի կ'երթայ:

— Բեզիլ բան մը պիտի ըսեմ, կ'ըսէ նշանաւոր գիտնականին, բայց խօսք տո՛ւր որ չպիտի առնուիս:

— Ի՞նչ, կը պատասխանէ միւսը:

— Իմ ձեռագիրներս քու կնիքներէդ աւելի սուղ կը ծախուին, չեմ գիտեր ինչո՛ւ համար:

— Ձարմանալու բան մը չի կայ հող, կ'ըսէ Ռընան հանդարտ ու ներողամիտ ձայնով մը:

— Երէկ Տրուօ փողոցի վաճառարանին մէջ երկու նամակներ աճաւրդի դրուեցան, մէկը քենէ, միւսը ինէ, քուկինդ երեք ֆրանքի բարձրացաւ, մինչդեռ իմս՝ հինգ ֆրանքի:

— Գիտեմ, յարեց Ռընան: Կուզե՞ս որ յայտնեմ պատճառը:

— Այո՛, ինչո՞ւ չէ:

— Պատճառն այն է որ, քու նամակիդ մէջ ուղղադրական շատ մը սխալներ կային: Բու հինգ ֆրանքի ծախած ինքնագրութիւնդ հո՛ւս, սեղանիս վրայ է: Բարեկամներէս մէկուն աչքին դարնելով այն կեղծ մարդրիտները, որով պէնսած ես քու արձակդ, գնած ու ինծի բերած է: Ձի մոռնամ ըսելու որ ինծի տուած տոնէր սապէս ըսաւ. — «Այս նամակը Պ. Պուասիէին յանձնեցէք, ինէ բարեխօսելով ըսէ՛ք իրեն որ, եթէ այսպիսի քեւրականական սխալներով դրութիւն մը հրապարակի վրայ ձեռքէ ձեռք պտուցուի՝ Ակադեմիին պատու չի բերեր—»:

Ու նամակը իր դասընկերոջ երկարելով աւելցուց Ռընան.

— Ահ. և եթէ դրամ չունենաս, կրնաս

զայն նորէն Տրուօ վաճառարանը տանիլ . . .
Եւ երկու «անմահ»ները, ձեռքովն իւր
բեմին ծածկած՝ քրքշալիւ խնդացին :

* * *

Ձենէ ո՛վ չսիրեր ինքնակենսագրութիւն-
ները որոնց մէջ իրականութեան, զգայու-
թեան, գաղափարի ու բարեկամութեան գը-
րտմը կը նշմարուի: Այսպէս, հիացումով կար-
դացուեցաւ այն հատուածը, զոր Սառա Պէն-
նար ստորագրած է, և որ իր Յիշատակնե-
րուն շուրջը կը դառնայ: Տեսէք ի՞նչ պար-
զութեամբ կը սկսի իր պատմութիւնը .

— «Դերձակուհի մը քով տուէ՛ք, կ'ըսէր
կնքահայրս ինծի համար, իր ուղածն է՝ ժա-
պաւէններ, պաճուճանքներ: Մանաւանդ որ
անոր ի՞նչ ըլլալը յայտնի չէ՛ տակաւին: Բայց,
մայրիկիս ծեր բարեկամներէն մէկը, որ ան
ատենը նախարար էր, զիսեւ տուաւ թէ
թատրոնը չառ մեծ յաջողութիւններ կը խոս-
տանար ինծի: Մայրիկիս կողմէն էր ինքը.
տգեղ չէի. յետոյ, անուշ ձայն մը ունէի և
սիրուն ակուններ, ինչ որ ինծի պիտի թոյ-
լատէր ազատօրէն ժպտելու: Պիտի մեծնայի,
պիտի գլորնայի. (մայրիկիս ծեր բարեկամը
տարախոյս չունէ՛ր որ ան ատեն օրագրող-
ները նիհարութիւնս պիտի քննադատէին):
Վերջապէս եզրակացուց որ զիս Պ. Օպէլին
ներկայացնելու է: Պ. Ժիրարտէն, որ յաջորդ-
օրը հօրաքրոջն պիտի գար, պիտի կարդադ-
բէր ասիկա, մայրիկիս ծեր բարեկամին հետ:

«Մայրս անձանթ կ'լին մըն էր և հետեւա-
բար չէր գիտեր թէ ի՞նչպէս մոյնելու է զիս
թատրոն: Հօրաքրոյս հոլանտերէնով բացատ-
րեց միջոցները: Արագօրէն և բաւական ա-
տեն խօսեցան: Կնքահայրս և Պ. Ք. . . երկու
կիներէն հեռացած, կը խօսէին յամբարայ: Մինակ էի, ոտքի վրայ, մեծ սրահին մէկ
անկիւնը անձանթին երկիւղովը լեցուած էր
միտքս: Ապագայ ըսուածը ի՞նչ էր ուրեմն:
Երջանկութեանս երազները շուրջն կը պարէին
յամբարայ: Բոլի սենսակէն, երկու դեռատի
քոյրերուն ծիծաղները անձկութիւն կը պատ-
ճառէին ինծի: Հոլանտական լեզուին թանձ-
րահունչ շեշտերը գանկիս կուգային կը գար-
նուէին, մինչդեռ երկու մարդոց խորհրդա-

ւոր ձայները երեւակայութիւնս կը զրդուէին:
Սկսայ լալ: Այս տեսարանին չորս անձերն ալ
ինծի մօտեցան: «—Ինչո՞ւ կուլաս, հարցուց
մայրս, մեղմօրէն գլուխս բռնելով ու մա-
ղերս համբուրելով, դերասանուհի ըլլալ չմ'ս
ուղեր: — Ձէ՛, չեմ ուղեր: Կրօնաւորուհի ըլ-
լալ կ'ուղեմ, պատասխանեցի բաւով: — Ինչ
մը փախուցեր ես դուն, ըսաւ հօրաքրոյս,
ուսերը թոթուելով: — Գնա՛ հագուէ՛, ըսաւ
մայրս: Շատ մի՛ լար:

«Բոլոր ուժովս կուրծքիս վրայ կը սեղ-
մէի մայրիկս. բան մը չէի կրնար ըսել.
բայց ան կը գգուէր, կը շոյէր զիս շարու-
նակ: Հանդարտեցայ քիչ մը: Սրահէն դուրս
եկայ:

«Խաղին սեղանը պատրաստեցին ուխդ-
մը խաղալու համար: Երկու քոյրերս ալ,
Ժանն և Ռէժինա, իրարու հետ կը խաղային:
Ես ալ խաղացի: Քառորդ մը վերջը սիրուն-
նալու միջոցներ կը փնտռէի, վասն զի զիս
տգեղ կը գտնէր կնքահայրս: Իրիկունը,
ընթրիքին, մայրիկիս կենացը բաժակներ պար-
պուկէն ետքը, իմ ապագայ գեղարուեստա-
կան յաղթանակներուն համար առաջարկեցին
և ծերուկ բարեկամը ըսաւ ինծի, երեսիս
պզտիկ ապտակ մը իջեցնելով. — Օր մը չը-
շնորհակալ պիտի ըլլաս ինծի, պղտի՛կ:

«Յաջորդ օրը Պ. Ժիրարտէնին ներկայաց-
ուեցայ, որ զիս սիրուն գտաւ, յայտարարե-
լով թէ քիչ մը Ռաչէլին կը նմանիմ, և յե-
տոյ ինձմով զրադեցաւ անմիջապէս: Խօսքը
բռնեց, երկու օր ետքը մայրս տունակ մը
կը ստանար, որոշուած ժամու մը Գօնսէր-
վաթուսաւ ներկայանալու համար:

«Ներկայացմանս համար, սեւ մետաքսեայ
չրջազգեստ մը յանձնարարեցինք: Որոշեալ
օրը վարսայարդար մը եկաւ և մաղերս գա-
լարեց կրցածին չափ: Երբեք այսքան տգեղ
չէի գտած ինքզինքս: Մայրիկս ատանկ ու-
ղած էր, ի՞նչ ընեմ: Կարճ չրջազգեստը ա-
սեղնադորձուած ճերմակեղէնս ցոյց կու տար.
նուրը բաղուններս կը սահէին՝ լայն, զիտ-
մա՛մը լայն պատրաստուած զգեստի թեւե-
րուն մէջ: Վիզս բուստերու շարքի մը մէջ
բռնուած էր: Իրնձափոշի քսած էին երեսս:

Սոսկալի բան մը դարձած էի, և երբ Օպէրի կը ներկայացուէի, ուրիշ աղուոր, սպիտակ ու վարդադոյն զգեստներ հագած ինէ մեծ աղջիկներու մէջէն, ուսերը շարժելով ըստ կամայ մը .

«—Խենթ է սա Ժիրարաէնը :

«Ու կռնակը ինծի դարձուց» :

Դեռ կը շարունակուի պատմութիւնը, նոյն բնականութեամբ, զգացումի ու հոգեբանութեան նոյն արտայայտութեամբ :

Այն աղջիկը, որ մարապետ ըլլալ կ'ուզէր, այն աղջիկը որ նիհար ու ճղճիմ կազմուածք մը ունէր, որ Օպէրի մը անդիտակից ծիծաղին կարժանանար, ո՞վ մտքէն կ'անցունէր որ ետքէն աշխարհահռչակ, հիմնալի արուեստագէտ մը պիտի ըլլայ, հանձարին ու աշխատութեան կրկնակ ձիրքերովը դօրացած :

Սառա Պէրնարի վրայ խօսած պահուստ պղտիկ նօթ մըն ալ :

Նշանաւոր դերասանուհին, արդի թատրոնի ամէնէն ծանօթ վարպետներէն մէկուն, Բիէր Տէքուբէլի առաջարկած է որ, իրեն համար Վերքեռ մը պատրաստէ : Կէօթէի այդ գլուխ-գործոցը, որուն մէջ անյադ, անզուսպ կիրքերու և երազային յափշտակութիւններու պատկերացումը կայ, ապահովաբար պիտի համապատասխանէ Սառա Պէրնարի բարձր ու անըջային կարողութիւններուն :

ՄԻՆՈՐ

ՏԻԿԻՆԻ ՄԸ

Աչքերուդ նուրը ծիրերուն մէջ մոգական, եղի գգուանք մը կը մոլորի պահէ պահ, Հոգիիս պէս, ուր տենջանքներ յիւ կուգան, Տենջանքնե՛րը աղւորութեանդ դադանապահ :

Անուշ, փախուկ, մարելու մօտ գէմքիդ քով, Տխրութիւն մը կը լլկէ զիս լուսադէս, Եւ միտերուդ վայելքներուն հեշտանքով ջէ՛ որ, Տիկի՛ն, պիտի կրնամ սիրել քեզ :

Որովհետե՛ կիրքին վրդով և փրկիւն


Ալիքները կ'անշքանան դողահար, Այն յանկուցիչ ամբողջութեան քով, որուն Անդրիայումն ես դուն, մարմնովդ անվթար :

Եւ որուն, ե՛ս, անզիջ, անդա՛րձ ուխտաւոր, Լոյս—երազիւ վայելքներուն մոլեռանդ, Կը նուիրեմ միտքս ու հօգիս, քե՛զ աղուոր, Խընկացումի աննիւթութեան մէջ հիւանդ :

...Ու խօլ իղձեր չէ որ կ'ուզեմ, սիրելի՛ս, Իղձեր՝ որոնք էութեանքս կուտան բոց . Մինակ, բեհեզ, վարդ գգուանքներ, որոնք զիս, Չարթնցնեն սա անուրջէդ ոսկեղօծ :

ՅԱՎՈՐ ՏԷՐ-ՅԱՎՈՐԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ



ԻԶՄԻՐԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Իզմիրի սուրճանդակը բերաւ մեզի այս շաբթու՝ հայերէն վէպ մը, Իր Իսկալը, հեղինակութիւն Օր. Մառի Կ. Արապեանի : Ինչ որ ալ ըլլան այդ վէպին հիւսուածքը, նիւթը, պատկերացումներն ու լեզուն, — վասնզի հազիւ թերթերը թղթատելու ժամանակ կայ՝ այս սողերը գրուած պահուն, — «հաճելի աշունդական բացատրութեամբ, և յառաջիկային վերադառնելով զայն Գրախօսականի մը նիւթ ընելու հարկը, գրական տեսակետով բարենշան երեւոյթ մը կրնանք համարել որ Իզմիրի հայ գեղեցիկ սեւը գիրք հրատարակելու աղուոր բաղձանքը կ'ունենայ : Որչափ որ կարելի եղաւ գաղափար կաղմել առաջին անգամով, վէպին գործողութիւնը կը դառնայ Իզմիրի մէջ որուն կեանքէն առնուած է նիւթն ալ :

Հանրային կեանքը, Իզմիրի հայ համայնքին համար, շատ հաճելի կ'անցնի այս ձմեռ՝ կէս—ընտանեկան երեկոյթներով ուր աշխարհիկ կեանքը ու բարեգործութիւնը՝ ձեռք ձեռքի տուած՝ աղքատներուն նպաստ և բարեկեցիկներուն ժամանց կը հայթայթեն այնքան ներդաշնակ ու ճաշակաւոր կերպով :

Այդ երեկոյթներուն երրորդը պիտի տրուէր այս չորեքշաբթի գիշեր, Բարեկենդանի զուարթութեամբը աւելի՝ ոգեւորուած անշուշտ:

ԱՐԲԵՊԵՍԱՆՊԱՆՈՍՆԵՐՈՒՆ ԶՈՒՐՁԸ

Ինքնատիպ յայտնութիւն մը կ'ընէ Արեւել, ծանուցանելով թէ Տ. Վահրաւ Մանուկունի Սրբազան անդամ մը արդէն (1888ին) արքեպիսկոպոսութեան տիտղոս ստացած է եղեր Տ. Մակար Կաթողիկոսէն: Մայր Աթոռի դիւանատան մէջ ստմար և արձանագրութիւն չիկա՞յ արդեօք, որ կրկնապէս արքեպիսկոպոսութեան կը բարձրացուի միեւնոյն եկեղեցականը: Ամէն պարագայի մէջ, նոր պատիւ մըն էր զոր Ս. Հայրապետը ընծայեց Կրօն. Ժողովի դեր-ատենապետին, որ գրաբար նամակով մը չնորհակալութիւն յայտնած է Ն. Ս. Օծութեան՝ փափկանկատութիւնը ունենալով անշուշտ չյիշեցնելու տասնըհինգ տարի առաջ իր ստացած արքեպիսկոպոսութեան կոնգակը: Պարագան, որքան հետաքրքրական, միակը չէ սակայն իր տեսակին մէջ, վստահ չի Տ. Մեարոպ Սուքիասեան Սրբազան ալ յաջորդաբար արքեպիսկոպոսութեան տիտղոս ստացած է Տ. Մատթէոս և Տ. Գէորգ Կաթողիկոսներէն:

ԹԱՏՏՐՈՆ

Օրաթերթերը գրեցին սպառեցին, չարթուս մէջ, ինչ որ կրնար ըսուիլ օտմ. կատակերգակ նոր խումբին առաջին ներկայացմանը վրայ ուր Չափրաստճեան և Տիկին Գոհարիկ իրենց վրայ կեդրոնացուցին հանդիսականներուն բովանդակ ուշադրութիւնը: Միւս դերասաններն ու դերասանուհիները, սկսնակները մանաւանդ, առաջին անգամ բեմ ելլով մը յուզումը, շիկնոտութիւնը շատ քիչ կը մասնէին իրենց խօսուածքին և շարժումներուն մէջ, ինչ որ քաջալերական է իրենց ասպազայ յաջողութեանը համար. միայն թէ... յարասուեն: Բեմական կեանքը, արտաքուստ այնքան փայլուն, ամէնէն յողմեցուցիչ ու սիրտմաշուք պատճառով ասպարէզներէն մէկն է, յուսալքիւղումներով լեցուն: Այն մանկամարդ կիները, աղջիկները ու երիտասարդները, որոնք իրենց դերասա-

նական նախախորձը ըրին փետր. Տի ցերեկոյթին, տոկուն աշխատութեան և համբերատար ուսումնասիրութեան պէտք ունին՝ անապթաք շարունակելու համար. և այս տեսակէտով, բաղդաւոր համարելու են ինքզինքնին որ լաւ կազմակերպուած խումբի մը մէջ կը գտնուին, նիւթական վարձատրութեան ապահովութեամբ, մինչդեռ մեր հին ու համբաւաւոր դերասաններէն շատերը կէսկուշա կէս-անօթի բեմ կ'ելլէին շատ անգամ: Դեռ յիշողներ կան Ագամեանը, իր առաջին տարիներուն մէջ, Օրթագիւղ՝ Բարեսիրաց թատրոնի անկիւնի նպարալաճառին խանութը, ուր իր ընթերթին menu կը կազմէին... ձիթապտուղ և հաց, մինչ ժամ մը վերջը բեմին վրայ պիտի երեւնար այնքա՛ն շքեղ ու հրապուրիչ:

«ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹԻՒՆ»

Վահան վրդ. Տէր-Մինասեան կանոնաւորապէս առաջ կը տանի իր Անգիւր Դպրութեան Բ. հատորին հրատարակութիւնը, աւարտ առ տետր: Շաբթուս սկիզբը լոյս տեսաւ 4րդ պրակը՝ «Սուրբ Սարգիս» որ կը զուգադիպէր նաև օրուան տօնին: Հեղինակը, իր ժողովրդական պարզուկ ոճովը, սառչէ կը ներկայացնէ այդ Սուրբը, իր ընթերցողներուն մաքին մէջ արթնցնելով աղայութեան օրերու յիշատակներ, մամիկներէն պատմուած. — «Ս. Սարգիս հանրածանօթ է առհասարակ ժողովրդեան՝ իբր աղջիկ փախցնող, այսինքն անէ տուն աղջիկ փոխադրող և տեղաւորող սուրբ: Այս սուրբն է հակապատկերը Սուրբ Կարապետի որ մարդկային աղուորիկ սեւին դէմ քէն ընող հռչակուած է միշտ. իսկ սա՛ Սուրբ Սարգիս՝ քիչ ընողներէն է համբաւուած, խանդակաթ սիրով հողածութեամբն առ ամուրիս և առ կուսանա, որոնցմէ և միշտ փնտռուած ու յարգուած»: Ու կը շարունակէ քրքրել աւանդութիւնները որ կան անոր մասին, նկարագրելով գաւառային ընտանեկան սովորոյթները՝ այդ տօնախմբութեան աւթիւ, փեսայուններուն և ուսնողը, աղջիկներուն անձկութիւնը, ու ջերմեւանդութիւնը անոնց մամիւրուն որոնք կերպեն:

Սուրբ Սարգիս,
Բռնե՛ գօթիս,
Տուն ու երգիի
Առնուն լուսիկ:

Սուրբ Սարգիս
Բռնե՛ գօթիս,
Տո՛ւր զաւակիս
Սիրականիս
Արեւ լոյս փեսայ
Զոհանչ լուսինկայ,
Ալլուռ քաւոր
Քա՛ջ ձիաւոր:

Բայց աւելի առաջ երթալով, դործին շահեկանութիւնը կորսնցնել տուած կ'ըլլանք: Լաւագոյն է որ գնուի ու կարգացուի՝ ժողովրդեան ամէն դասակարգերուն մասնակի այս երկասիրութիւնը որ հնութիւն կը բուրէ ու անհետացած դարերու առանին կեանքի մթնոլորտներուն մէջ կը փոխադրէ ընթերցողը:


ՇԱՀԻՆԵԱՆ ՈՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Մուշեղ վարդապետին «Անձնական յիշատակներ»ը որոնք այնքան սարսաղադէպիկ տողերով պատկերացուցին վաղամեռ Գր. Շահինեանը՝ իր ուսանողութեան շրջանէն մինչև կեանքին վերջին օրերը՝ մինակ այդ դաստիարակին սրտի անձկութիւնները ու հոգեկան մորմոքները չէ՛ր որ կը նկարագրէին, այլ հայ դաստիարակինը ընդհանրապէս: Տարաբաղդ Շահինեանը, իր կենդանութեանը, կը նկատէինք հեռուէն՝ հմուտ և զրջի աէր բանասէր—ուսուցիչ մը, առանց բնաւ գիտնալու թէ բանասէրին և ուսուցչին մէջ՝ տառապող, հիւժող մարդը կար, —թաղականի, հոգաբարձուի ու քահանայի յարուցած զժուարտութիւններուն, անձնական կիրքերու և նախանձատութիւններու մէջտեղ մաքառող վարժապետը, որ սակայն անյող-դողդ մնաց մինչև վերջը, թէև աստանդական՝ քաղքէ քաղաք, դպրոցէ դպրոց: Իր մահը պէտք էր, և Մուշեղ վարդապետին անկեղծ ու կտրովի գրիչը՝ որպէս զի պատմութիւն բոլոր տխուր անցքերը անոր ներքին կեանքին:

Իրրև դրագէտ՝ Շահինեան թերեւս միութարուած փակեց իր աչքերը, այն օրերուն մէջ ուր բարերար մը խօստացած էր հողալ իր բանասիրական մէկ կրկին տպագրութեան ծախքը: Իր մահը պատճառ մը չէ որ այդ մեկենասը չգործադրէ իր դրասիրական խօստումը որ, հիմայ, մարդասիրական հանգամանք մըն ալ կ'առնէ, երբ յիշենք թէ Շահինեան կը թողու որք մը ու այրի մը որոնց նիւթական վիճակին վրայ բան մը չենք գիտեր: Իր գործերէն դնէ մէկին անմիջական հրատարակութիւնը, մնայուն ձև մը տալէ զատ իր յիշատակին՝ հայ դրականութեան մէջ, նիւթական սատար մըն ալ պիտի ըլլայ իր անունը կրող մանկամարդ կնոջ ու դեռատի զաւկին: Վեհանձնութեան զեղեցիկ օրինակ մը տուած պիտի ըլլայ այդ բարերարը—որուն անունը անձանօթ կը մնայ դեռ ամէնուն:

Տ. Ս.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՉԵՆՈՅՅՆԵՐ



Յ. Գ. Մրմբեանի Հին Դեմքեր և Մէրսէտէի Ոստանիկ Տէր Մարգարեանցը յաջորդ թիւին յետաձգել հարկադրուեցանք՝ իրենց ընդարձակութեանը պատճառով:

—Մասիսի այսօրուան թիւը, ինչպէս հաճոյքով պիտի զիտեն ընթերցողները, գեղեցիկ սեւին պատկանող երեք կարող գրիչներու աշխատակցութիւնը մէկանց կը վայելէ: Տիկին Զապէլ Եսայեան, մանկամարդ դրագիտուհին, դժած է «Կեանքի պատկեր» մը որուն մէջ հոգեբանութիւնը ու ոճի նրբութիւնը ներդաշնակաւ որուած՝ եղական հրապոյր մը կուտան այդ գրուածքին, —Ապուրը,—պարզ ու տխուր նիւթ մը որ իրականութիւնը կը ցուցադրէ: Իսկ Օր. Պերճուհի և Օր. Ագապի,—որոնցմէ առաջինը այնքան գեղեցիկօրէն թարգմանեց, ասեոք, Քառմէն Սիլվայի մէկ վիպակը Մասիսի մէջ, —Բօլ Ռուժէի ու Առման Սիլվեդրի մէջ մէկ զոդարիկ բանաստեղծութիւնները թարգմանած են յաջողապէս:

Այս կերպով, ինչպէս ըրինք ներկայ տա-

րեշտանի սկիզբէն, աւելի լայն տեղ մը պիտի տանք կնոջական գրիչներու արտադրութեանց, արձակ թէ ոտանաւոր, մեր մասնակցութեան բաժինը լայնօրէն բնծայելով այդ սեռին մշակութեանը, որ մէկ—երկու ձեռքերու մէջ կեդրոնացած չի մնար այլևս, գրական մօնօրօլի մը պէս:

— Մասիսի Թրդ թիւին մէջ կ'աւարտի Անտրէ Թէօրէի վէպը, զոր իբր թերթին կը հրատարակենք, և այնուհետեւ իւրաքանչիւր թիւով պիտի հրատարակենք մէյմէկ նորաւէպ, մեր կեանքէն ու բարքերէն:

ԱՅԾԵՄՆԻԿԻ ՓՈՒՆՁԸ

(Le bouquet de chevreuilles)

ՎԷՊ ԱՆՏՐԷ ԹԵՕՐԷԻ

Թ. 7.

Է.

Երգում ըրի ա'լ չվերակիլ, բայց երդումս ները ինչ արժէք ունին սիրոյ մէջ: Երբորդ այցելութեանս՝ տիկին Լիւս ինքը ջանաց փորձութեան ենթարկել զիս: Բան մը չէի հասկնար այս քմահաճ կնոջ յարախօսիտի բնականութենէն: Երբ զիս երկնոտ ու կասկածոտ վիճակի մը մէջ կը տեսնէր, կարծես հաճոյք կը զգար զիս զգլխիկով: Ան ատեն ինք կ'ըլլար քծնող, դրդառդ, այնպէս որ մեծ համարձակութիւն մը կը ստանայի ու կը բորբոքէի: Նախ տկար պաշտպանողականով մը կը դիմադրէր, ինչ որ ուրիշ հետեւանք չէր ունենար՝ բայց եթէ զիս ա'լ աւելի աներես ընել: Այսպէս, առաջին շաբթուն վերջը, թոյլատրած էր համբուրելու աչքերը, մազերը ու վիզը: Երբ փորձեցի աւելի առաջ երթալ ու շրթունքներս իրեններուն մօտեցնել, զըլուխը ուժգին կերպով դարձուց:

— Միաքերնի'դ բերէք Լիւսիկ կողովը, կը մրմռար չարաճճի ժպիտով մը.

Այս կէս չնորհուած ու կէս դողցուած համբոյրները հեշտագին էին: Զօրաւոր գինիի մը պէս զիս կը զինովցնէին ու ա'լ ինքզինքըս չէի ճանչնար: Բայց Լիւս միշտ ինքզինք

քին տէր կը մնար: Կը կռուէր ինծի հետ վայրագ ուժգնութեամբ մը, և երբ վախնար թէ չպիտի կրնար յաղթել՝ կը սահէր րազուկներու մէջէն ու ինքզինքը կը թողուր որ իյնայ դեպիւնը, հոն նստած կը մնար սրունքները ծալուած ու համեստօրէն պահուած շրջադեատին ծալքերուն մէջ: Այս պաղատական ու միանգամայն պաշտպանողական դերքին առջեւ չէի համարձակեր բան մը ընել: Հակառակ նստարին պատուէրներուն, այդ կնոջ վրայ որ և է յարձակումս պիտի գործէր ինծի՝ կոշտութեան մը պէս. շրջադեատը որուն մէջ ինքզինքը կը պահպանէր՝ ինծի՝ համար անձեռնմխելի կ'երեւար: Ան ատեն կը ծնրադրէի քովիկը, կը պաղատէի մեղմիւ, ու Լիւս փափկանկատութեան մանրամասնութիւնները յարգելիս լաւ դիմանալով ու գուշակելով՝ զիս անկուսին եղրը բռնող յարգանքս, կը ջանար բորբոքել զիս զգացական քծնարանութիւնս ներով:

— Ո'չ, մրմռաց, վեհանձն եղիք... ձեզի տուած եմ արդէն ինչ որ պատուաւորապէս կրնայի ալ, գոհացի'ք այդչափով ու մի՛ ստիպէք զիս, որ կարմրելու աղաոտ արարքի մը մէջ դանուխմ:

Կուտար ինծի արդարեւ ամէն ինչ որ կըրնար զիս աւելի խելայեղ սիրահար մը դարձնել. կը թոյլատրէր համբուրել պարանոցը, աչքերը ու նոյն իսկ շրթունքները, բայց խոհեմաբար կը զգուշանար այն փայփայանքներէն սրունք կրնային զինքը մզել տանիլ որ և վտանգաւոր տկարութեան մը:

Վարագուքափակ այս երկար առանձնութիւններուն վտանգէն խորշելով՝ ինծի առաջարկեց առօրեայ այցելութիւնը երբեմն դաշտային պոստի մը փոխել: Այս չնորհն ալ իբր մեծ պարգև մը և իր սիրոյն մեծ արտայայտանքը նկատել կուտար ինծի: Արդարեւ, խանդաղաւանքով կ'ընդունէի վստահութեան այս նոր ապացոյցը: Այն օրերը, իրիկունը խոյս կուտայի ընթրիքէս ու կ'երթայի միանալ Լիւսի որ կը սպասէր ինծի պարտէզին մէջ: Կերթայինք մարդագետիւնը որմախակ ցանկին խրամատէն ու հոնկէ՝ առանուխի հոտերով ողողուած գետեղերքը:

Մերթ կը մխրձուէինք մութ ու խոր ճամբաներու մէջ, բարձր մայրաքանդակներուն մէջ տեղը որոնց ճիւղերը իրերախառնուած էին մեր գլխուն վերեւ, և ուր լոյսը հազիւ ներս կը թափանցէր: Մերթ կը հետեւէինք լուսնի յատակ լոյսովը ողողուն ճերմակ ճամբուն որ կը տանէր դէպի ջաղացք մը: Գիշերային այս պահերուն լուիկ էր դաշտը ուր իբր մեր տան մէջ կը գտնուէինք: Տեղացիները չեն սիրեր պտոյտը: Կիները յօժարակամ անասէր են ևւ էրիկ մարդիկ կը նախընտրեն փակուիլ սրբ-ճարանները: Ուրեմն ո՛ր և է ձախտը հանդի-սումի վտանգ չի կար մեզի համար: Երբեմն, մինակ, կը նշմարէինք ճամբուն զաւիլայրին վրայ Շիֆֆանտէլ անուն թափառաչըլիկ մու-րացիկ մը որ Շարու կուգար մուրալ առեւ-տուրի օրերը: Զինքը կը գտնէինք շատ ան-գամ խոտին մէջ նստած, քովիկը դրած պա-յուսակը ու ցուպը, հաց ու երչիկի կտոր մը ուտելով: Հազիւ կը վերցնէր գլուխը և ա-պուշ ու անոգ կը նայէր մեզի, երբ կ'անց-նէինք թեւ թեւի. յետոյ կը շարունակէր իր ճաշը:

Համոզուած ըլլալով որ բացօթեայ տե-ղեր երբէք չպիտի նետուէի այն խենթու-թիւններուն մէջ որոնց կը մզուէի իր ան-հակը գտնուած միջոցիս, Տիկին Լիւս ինք-զինքը կը լքանէր աւելի, ցոյց կուտար աւելի խնամք, փափկութիւն ու հրապոյր: Շարուի չըջանակներուն ներսէ մը գունագեղ գաշ-տային տեսարանները, իրիկնամուտի խորհրդ-գաւորութիւնը, աշնանային գիշերը կ'ընծա-յէին մեր պտոյտին բանտտեղծական ոգի մը ու խանդ մը որ սրտիս կը խօսէր: Սալօնի բոցեղ միայնութեան փոթորիկներէն ետքը, քունի մէջ թաղուած ձորակին մէջտեղէն եղած այս արշաւանքները չեմ գիտեր ի՞նչ վիպական ու քաղցրիկ բան մը ունէին: Հեշտօրէն կ'անցնէինք ցողալից թաւուտքնե-րու մէջէն, ջերմեւանդութեամբ մտիկ կ'ընէ-ինք գորտերուն կրկնոցը և գետակին օրօրող կարկաշտը: Լիւս կը քաղէր այծեմնիկ-ներու փունջեր: Սեւուկ աչքերը կը վառէին թերաստուերին մէջ, և բազուկները աւելի հաճոյակատարութեամբ կը կռթնէին խմին-

ներուս վրայ: Թարմ ու զով օդէն ու վայրի ծաղկանց անուշահոտութենէն խելքս զլխէս թռած՝ կը վերադառնայինք դուարթ ու կայ-ստաւ, միեւնոյն ճամբէն: Պարտէզ մտածնուս պէս, կը բաժնուէինք համբոյրով մը, խոտ-տանալով միեւնոյն պտոյտը կրկնել յաջորդ օրը կարելի եղածին չափ կանուխ:

(Շարունակելի)

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Մասիսի արտօնատէրը հրապարակաւ չը-նորհակալութիւն կը յայտնէ իր այն յարգելի պաշտօնակիցներուն որոնք՝ իր վերջին հի-ւանդութեանը առթիւ՝ համակիր տողերով ապաքինում մաղթեցին: Նոյնպէս հրապա-րակային շնորհակալութեամբ մը կը պատաս-խանէ ամէն անոնց որոնք անձամբ այցելե-ցին իր բնակարանը և կամ այցետոմսով որ-պիսութիւնը հարցուցին:

* * *

Այս առթիւ, խմբագրութիւնս ալ, իր կողմէ, ուրախութեամբ կը ծանուցանէ Կա-րապետ Էֆ. Իւթիւճեանի ապաքինումը, չը-նորհիւ ճարտար դարմաններուն Տօքթ. Նա-ֆիլեան փաշայի և իր որդւոյն՝ Տօքթ. Եղ-ուարդ Էֆ. Մասիսի:

Ն Ա Մ Ս Կ Ա Տ Ո Ւ Ք

Օր. Մառի Յովնանեան (Բերա)—Յօդ-ուածը, զոր կը յիշէք Ձեր նամակով, չենք ստացած. ապա թէ ոչ, արդէն իսկ երեւցած պիտի ըլլար Մասիսի մէջ: Կարծիւ չէ՞ր որ առաջնութիւնը սայիւր Քրիդանթէմի «Հայու-կընիկ» յօդուածին պատասխանին զոր կը խո-տանաք զրկել և որուն հետաքրքրութեամբ կը սպասուի, կնոյական գրականութեան հարցովը զբաղող չըջանակներուն մէջ մա-նաւանդ:

Արսօմսէր Կ. Ս. Իթիթիճեան

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎ ԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵՍՆԲ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆԲ, ԱՐԿԱՇԲ

Ընկերության զրամագլուխը, ամբողջապես վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագիրներ ու տոկոս	54,000,000	»
Երաշխանորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնասեղի, Ղալաթիոյ Գարաիիմ վրայ, Մաֆասան հին տեղը

ԸՆԴԸ. ԳՆՆԻՀ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

ԸՆԴԸ. ԳՈՐԾԱԿԱԼ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵԷՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԺԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|---|
| ՐՆՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՍԼԱԹՍ. | } | 1. Սինկէր խան. Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէոյ, Թրամիլէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԵԻՏԱՐ | | 2 արշը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարելաբար երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին. Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԻՒՆԻՍԵՆ Ապահովագրական Ընկերություն
Տնօրենությունը յառաջիկայ 1/14 մարտին
սկսեալ իր գրասենեակները պիտի փոխադրէ,
Պոլիս, Սուլթան Համամ նորաշէն Գաթըրճի
Օղլու Բառաժը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

ԳԵ. ՆԵ. ՇԵ. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բաքիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւ-
ւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժա-
կան գործողութիւններ՝ վերջին կատարեալ
գործեալ դրութիւններով:

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն
մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքս-
քերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնա-
կան ու փորձառական երկար ուսումնասի-
րութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ.
Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա,
Թարլա Պաշը, Թիւ 136:

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունին ամէն օր
կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը
1-4 (Ը. Ն.): Երեքշաբթի օրերը միեւնոյն
ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւ-
ւանդները:

6—20

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԳԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Գ Ե Հ Ի Զ Ի Ի Վ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շնորհ	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Զ Ի Ի Վ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շնորհ	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿՍՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵԻՆԷԼԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեցով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի
ապահովագրողը Ձերժ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղուման (accumulation
des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալքա, Թահրապուրու հան, Օսմ. Պաշայիմ դիմացը
Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ